Հ. ԼՈՆԳՖԵԼԼՈ

ՀԱՅԱՎԱԹԻ ԵՐԳԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Եթե հարցնեք՝ ո՞րտեղից են
Էս լեգենդներն ու զրույցներն
Անտառների անուշ բույրով,
Հովիտների շաղ ու մուժով,
Վիգվամների ոլոր ծուխով,
Մեծ գետերի սահանքներով,
Նրանց անվերջ որոտումով
Ու վայրենի արձագանքով,
Ինչպես ամպրոպ սարերի մեջ.
Ես ձեզ կասեմ, ձեզ կըպատմեմ։

Անտառներից, հովիտներից,
Նորդլանդիայի մեծ լըճերից,
Օջիբվայի խոր աշխարհից,
Դակոտների վայրի երկրից,
Ճահիճներից, ճախիններից,
Ուր շուհ-շուհ-գան՝ արագիլը
Կեր է փնտրում ճըլկուտներում,
Կրկնում եմ ես էս զրույցներն

Անուշ երգիչ ու երաժիշտ
Նավադահի պարզ երգերով։
Եթե հարցնեք՝ ո՞ւր է գըտել
Էս երգերը Նավադահան,
Էսքան վայրի ու քըմահաճ.
Ես ձեզ կասեմ, ձեզ կըպատմեմ։
— Թռչունների բըների մեջ,
Ջըրշունների խոռոչներում,
Բիզոնների արոտներում,
Արծիվների բընավայրում.

Ճահիճներում, ճախիններում,
Մելամաղձիկ թափառելով,
Երգում էին նըրա համար
Մանգը՝ բադը, սագը՝ վավան,
Եվ շուհ-շուհ-գան՝ արագիլը,
Եվ կըտցարը՝ չիթովեյկը,
Վայրի հավը՝ մուշկոդազան։

Եթե դարձյալ հարցմունք անեք՝
Ո՞վ է հապա Նավադահան,
Պատմի դու մեզ նըրա մասին.
Ձեր հարցմունքին էս խոսքերով
Կըտամ իսկույն ես պատասխան։
— Թավազենթի պերճ հովիտում,
Ծոխ մարգերի լըռության մեջ,
Արծաթափայլ ջըրերի մոտ
Ապրում էր վաղ Նավադահան։

45 Հընդիկ գյուղի շուրջը բոլոր
Փըռվում էին հանդեր, արտեր,
Ու կանգնած էր հին ծըմակը,
Հին ծըմակը սոճիների,
Ամռան՝ կանաչ, սոսափելով,
50 Ձմռան՝ փայլուն ճերմակ ձյունով,
Լիքը երգով, հառաչանքով։

Հովիտն ի վար հոսում էին
Էն ջըրերը արծաթափայլ,
Գարնանը՝ խիտ եղեգնուտով,
55 Ամռանն՝ երկար բարդու շարքով,
Աշնանը՝ գորշ մեգի տակին,
Ձըմռան՝ ճերմակ ափերի մեջ։
Ու ապրում էր երգիչն էնտեղ,
Թավազենթի պերճ հովիտում,
60 Ճոխ մարգերի լըռության մեջ։

Էնտեղ երգեց նա էս երգը,
Անուշ երգը Հայավաթի,
Թե ինչպես նա ծնվեց, ապրեց,
Ու ինչպես էր ճգնում, տանջվում,
65 Քարոզում էր ու համոզում,
Որ երջանիկ դարձնի մարդին,
Որ բարձրացնի ժողովըրդին։

Ով սիրում է բընությունը
Ու մարգերում լույսն արևի,
70 Սիրուն ստվերն անտառների,

Սիրում հովը տերևներում,
Եվ անձրևը, և փոթորիկ,
Եվ սահանքը մեծ գետերի,
Եվ կայծակը սարերի մեջ,
Թավուտներում սոճիների,
Նա կըլսի էս զըրույցը,
Զքնաղ երգը Հայավաթի։

Ով սիրում է ժողովըրդի
Լեգենդներն ու բալլադները,
Որոնք, ինչպես հեռու ձայներ,
Կանչում են, որ ականջ դնենք,
Ու խոսում են պա՜րզ, մանկաբար,
Որ հազիվ է մարդ որոշում՝
Ե՞րգ է արդյոք թե պատմություն,
Ականջ կանի նա հաճույքով
Էս հնդկական հին զըրույցին,
Խաղաղ երգին Հայավաթի։

Նա, ում սիրտը թարմ է ու պարզ,
Հավատում է Աստծուն, բնության,
Հավատում է, որ հավիտյան
Մարդկային է սիրտը մարդու.
Որ վայրենի լանջի տակ էլ
Մի անմեկին կյանքի համար
Կան բաղձանքներ ու ձգտումներ.
Որ խավարում խարխափելիս,
Թույլ ձեռքերը անօգնական,
Հանդիպելով Աստծո աջին,

Կյանք են առնում ու զորանում.
Նա կըկարդա էս զըրույցը,
100 էս պարզ երգը Հայավաթի։

Ով երբեմըն իր շըրջակա
Լուռ հանդերում թափառելիս
Մի մոռացված շիրմի առջև
Կանգ է առնում, միտք է անում
105 Նրա կիսեղծ գըրի վըրա,
Որ գրված է պարզ, անարվեստ,
Սակայն որի ամեն խոսքը
Լիքն է կյանքի, հանդերձյալի
Անվերջ հույսով ու թախիծով,
110 Նա կըկանգնի ու կըկարդա
Խոր հնության արձանագիր
Էս հին երգը Հայավաթի։

I

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՁԻԲՈՒԽԸ

Ու մեծ դաշտի լերանց վըրա,
Կարմիր ժայռի բարձունքներին,
115 Նա, հըզորը, կյանքի տերը՝
Գիտչի-Մանիտոն իջնելով,
Կանգնեց շիտակ և ազգերին
Ու ցեղերին կանչեց ի մի։

Նրա ոտքի տեղից բըխեց,
120 Հոսեց մի գետ անդունդն ի վար,

Առավոտյան շողերի մեջ
Շողշողալով ու ծոր տալով
Էն Իշկուդա-աստղի նըման։
Ու խոնարհեց Ոգին երկրի,
125 Աչով մարգում նրա համար
Գծեց ոլոր մի ճանապարհ,
— Գնա՛, ասավ, էս ընթացքով։

Ապա պոկեց իրեն ձեռքով
Քարահանքից մի կտոր քար,
130 Շինեց կարմիր չիբխի գլուխ
Ու զարդարեց նկարներով։
Գետի ափից եղեգն առավ
Իր մութ կանաչ տերևներով
Ու կոթ շինեց չիբխի համար.
135 Լըցրեց ուռու չոր կեղևով,
Կարմիր ուռու չոր կեղևով։
Շընչեց մոտիկ մեծ անտառին,
Ու ճյուղերը տըվավ իրար,
Կըրակ հանեց, վառեց չիբուխն,
140 Ու կանգնելով էն սարերին
Գիտչի-Մանիտոն՝ հրզորը,
Ծըխեց իրեն գալյումետը,
Իբրև նշան ողջ ազգերին։

Ու ծուխն ելավ կամաց-կամաց
145 Առավոտյան խաղաղ օդում,
Առաջ ինչպես մըթին մի գիծ,
Հետո կապույտ, խիտ գոլորշի,

Ապա ճերմակ ամպի նման
Բարձրանալո՛վ, բարձրանալո՛վ,
Մինչև հասավ վեր երկընքին,
Մինչև ցրվեց վեր երկընքում
Ու փաթաթեց շուրջն ամեն բան։

Թավազենթի դաշտավայրից,
Վաոմինգի հովիտներից,
Տուսկալուզի ծմակներից,
Հեռո՛ւ, հեռո՛ւ Ժեռ սարերից,
Նորդլանդիայի լըճափերից
Ազգերն ամեն նըկատեցին,
Տեսան հեռվում բարձրանում է
Խաղաղության չիբխի ծուխը։

Ու ազգերի մարգարեներն
Ասին՝ տեսե՛ք, էն Պուկվանան
Խաղաղության չիբխի ծուխն է,
Որ թեքվում է ուռենու պես,
Շարժվում կանչող ձեռքի նման։
Մե՛ծ, հեռավոր էն նըշանով
Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,
Կոչ է անում մարտիկներին
Ողջ ազգերի ու ցեղերի։

Գետերն ի վեր հովիտներով
Եկա՛ն, եկա՛ն, հավաքվեցին
Մարտիկները ողջ ազգերի.
Դելավարներն ու մոհոկները,

Զոտկոսներն ու կամանչները,
175 Շոշոններն ու սեվոտները,
Օմոհոններն ու պոները,
Մանդաններն ու դակոտները,
Հուրոններն ու օջիբվեները։
Ճամփա ելան ողջ միասին
180 Խաղաղության չիբխի ծըխի՝
Գալլումետի ծըխի վըրա
Դեպի սարերն էն մեծ դաշտի,
Մեծ քարհանքի ժայռը Կարմիր։

Ու զենքերով, զըրահներով,
185 Նախշուն, ինչպես աշնան տերև,
Ինչպես երկինք առավոտյան,
Էնտեղ, դաշտում, նրանք կանգնած
Նայում են խեթ իրար վրա,
Աչքերի մեջ ատելություն,
190 Սըրտերի մեջ դարևոր քեն,
Արյան ծարավ պապենական։

Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,
Արարիչը մարդկանց ազգի,
Նայեց նրանց կարեկցաբար։
195 Իր հայրական սիրով նայեց
Նրանց կըռվին ու պայքարին,
Ինչպես իրեն անխելք ու խակ
Մանուկների կըռվի վըրա։

Ու տարածեց իր աջ ձեռքը՝
200 Մեղմի նրանց բընույթը կոշտ,

Մեղմի տապը, ծարավն անհագ
Իրեն աջի հովանու տակ։
Խոսեց խրոխտ ու վեհ ձայնով,
Էն ջրերի աղմուկի պես,
Որ թնդում են խոր անդընդում,
Խրատելով, նախատելով
Էսպես խոսեց ազգերի հետ.

— Ո՜վ իմ որդիք, իմ հե՜գ որդիք,
Ականջ դըրեք իմաստության,
Ականջ դըրեք խրատներին
Ձեր արարիչ, ձեր ստեղծող
Հըզոր Ոգու շըրթունքներից։
Տըվի ես ձեզ ամեն բարիք.
Երկիր տըվի՝ որսի համար,
Գետեր տըվի՝ ձուկ բըռնելու,
Տըվի ձեզ արջ, տըվի բիզոն,
Տըվի եղնիկ ու եղջերու,
Տըվի ըսկյուռ, տըվի ջըրշուն
Ու ճահիճներ լի հավքերով.
Ինչո՞ւ գոհ չեք դուք տակավին,
Ինչո՞ւ եք դուք որսում իրար։

Հոգնել եմ ես ձեր վեճերից,
Ձեր արյունոտ կըռիվներից,
Հոգնել եմ ձեր՝ սպանության
Ու վըրեժի աղոթքներից։
Ձեր ուժն ամբողջ սիրո մեջ է,
Ձեր կորուստը՝ կըռիվների.

Արդ ապրեցեք այսուհետև
Խաղաղ, սիրով, եղբոր նման։

Ես կուղարկեմ մի մարգարե.
Փրկիչ համայն ձեր ազգերի։
Նա կաշխատի, կապրի ձեզ հետ,
Կառաջնորդի, կըքարոզի։
Եթե լըսեք նըրա խոսքին,
Կըբազմանաք, կերջանկանաք,
Իսկ թե թողնեք անուշադիր,
Կընըվազեք ու կըկորչեք։

Մըտեք այժմ էս գետի մեջ
Ու լըվացեք ձեր դեմքերից
Կրովի վայրի նըկարները
Ու արյունը ձեր մատների։
Թաղեք հողում ձեր զենքերը,
Առեք կարմիր քարը հանքից
Ու շինեցեք կարմիր քարից
Խաղաղության չիբխի գլուխ.
Եղեգն առեք եղեգնուտից,
Զարդարեցեք փետուրներով,
Ու ծըխեցեք ի միասին
Խաղաղության չիբուխները,
Ու ապրեցեք այսուհետև
Խաղաղ, սիրով, եղբոր նման։

Ու ձըգեցին մարտիկները
Շապիկները այծեմենի,

Զրահները ռազմական,
255 Մըտան գետը արագահոս,
Ու լըվացին երեսներից
Կռվի վայրի զարդերն ամեն։
Տիրոջ ոտքի տեղից հոսում.
Ջուրը վերից գալիս էր ջինջ,
260 Իսկ նրանցից ներքև պղտոր,
Գնում էր մութն, ապականված,
Արյունախառն ու կարմրագույն։

Ու դուրս եկան մարտիկները
Գետից հստակ ու մաքրված,
265 Ու թաղեցին գետի ափին
Իրենց զենքերը ռազմական։
Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,
Արարիչը ու Մեծ Ոգին
Այն ժամանակ սիրով ժըպտաց
270 Անօգնական զավակներին։

Ու մարտիկներն, ամենքը լուռ,
Առան քարը մեծ քարհանքից,
Եվ հղկեցին ու շինեցին
Չիբուխները խաղաղության։
275 Եղեգն առան գետի ափից,
Զարդարեցին փետուրներով,
Ապա դարձավ ամեն մեկը
Իրեն տունը, հայրենիքը,
Մինչդեռ Ոգին, կյանքի տերը,
280 Վերանալով ամպերի մեջ,

Սուզվեց, երկնի բաց դռներում,
Խաղաղության չիբխի ծըխի՝
Պուկվանայի ամպով պատած,
Անհետացավ նրանց աչքից։